Հրանտ Մաթևոսյան

Հողը և գյուղը

Օհանես պապը մի հարյուր տարի առաջ թողնում-փախչում է Հաղպատի հողատեր Զառ-բարաթով-Աբդուլաշվիլուց: Նրա ետևից գալիս են ուրիշներ՝ փախած սույն կամ ուրիշ իշխանիկից: Իսկ Լոռին լիքը իշխանիկ էր: Գալիս մի տեղ տեսնում են՝ մի գետակ թափով կտրում է պղտոր գետը, մյուս ափով ահագին տեղ քշում իր մաքուր ջրերը և նոր խառնվում-գնում: Բռնում են այդ գետակի հունը և բարձրանում: Այս, իհարկե, չի նշանակում, թե նրանք Սանասար-Բաղդասար էին և պետք է հիմնեին Սասուն: Խեղճ մարդիկ էին՝ ունեցածը մի իշի վրա, և հիմնում են ընդամենը Ահնիձոր՝ աշխարհի ծայրին: Անտառ, մի կտոր երկինք՝ դիմհարված յոթ ծխի, Հաղպատից բերված միակ շան հաչոց՝ անտառում խլանալիս, և արջ, և

Տերիտորիան կազյոննի է, յոթի հատ դեղին ոսկի:

Սա, իհարկե, արջը չի ասում. արջը, նախ, դժվար թե գործածեր տերիտորիա բառը և, հետո, չէր հասկանա կազյոննի բառը, բոլորովին չէր հասկանա: K3HHbIH... Արջը, շա՜տ, շատ, փնթփնթում է մարդու հարևանությունից և հաշտվում, որովհետև մարդու ձեռքին կացին կար:

«Գյուղ եք, հարկ տվեք», բայց գյուղ չէր: Ճիշտ է, ազդագիր Լալայանցը քարտեզ էր կազմել, քարտեզին Ահնիձորը նշանակել գյուղի պայմանական նշանով, կողքին գրել «Ախնազար», Հովհ. Թումանյանը հոդվածով քննադատել էր Լալայանցին, թե ինչու պարոն ազգագիրը սխալ է գրում հայոց գյուղերի անունները, ինչու, օրինակ, Ահնիձորը՝ Ախնազար, սրանք ճիշտ են, բայց

Ահնիձորը գյուղ չէր:

Իսկ հողը նույն կենսագրությունն ունի, ինչ հայոց՝ հազար անգամ մոխրացած, հազար մեկ անգամ կանաչած հողը. այստեղ մարդ ապրել է, այս ձորը եղել է մի բերրի հովիտ, մարդաշատ, ինչպես հայ հողի ուզածդ կտորը:

Նորերի խոփը դեմ էր առնում քարի, հերկվորը հանում էր քարը, և դա քանդակ-խաչ էր լինում: Ցից էր դնում արտի կողքին, ինչպես դարեր առաջ, և դա, արտի հետ, դառնում էր սրբատեղի:

Ժամի ձորում սալ քարեր կային. հարմար բաներ էին, որ վրաները աղ փռվեր տավարի համար: Գարնան հեղեղներից մեկը քարի տակից հանեց կմախք՝ բազուկը ոտքիդ հաստության: Այդ տեղը գերեզմանոց էր եղել, շարունակեց գերեզմանոց լինել նորերի համար:

Հանդում մի տեղ պատերի մեջ կաղնու փտած բուն կա. պատերը տուն են եղել, տան մեջ կյանք: Մարդկային կյանքը սրբվել է տնից, իսկ քարը քարին մնացել է, և պատերից ներս ծլե՛լ է կաղնին, աճե՛լ է կաղնին, ընկել ու փտե՛լ է կաղնին, որ ապրում է հինգ հարյուր տարի կանգնած, հինգ հարյուր տարի թիկնած՝ բանաստեղծության մեջ, երկու հազար տարի՝ ըստ մասնագիտական գրքերի, իսկ իրականում՝ անհայտ է թե ինչքան, որովհետև կաղնին չի ընկնում ու մեռնում, կաղնին միշտ կայծակնահար է լինում: Քարը քարին մնացել է մինչև մեր օրերը, մի կաղնու կյա՛նք:

Խոփը դեմ է առնում քարի, և դա քար չի լինում, կարասների շարք է լինում, ամեն մեկը՝ մարդը ձեռքը բարձրացրած՝ այդ հասակի, երկու մարդ հազիվ գրկեն՝ այդպիսի փորով, բերաններին՝ սալ քար, մեջները՝ տակը թանձր նստած սև հեղուկ երևի ձեթ, թե՞ ցորեն՝ փտած-հեղուկացած: Մի ցորենի կյանք առաջ այստեղ մարդկային կյանք է եղել:

Մի քանի անգամ այս ձորերում առողջ զարկերակով տրոփել է կյանքը. եղել են ցորեն, ձեթ, ձեթի լույսի տակ մատենագիրն ուզեցել է թողնել դարերի համար կյանքի գովքը, բայց մահը անցել է ձորերի վրայով՝ որպես համաճարակ կամ Լանդթեմուր, և մնացել են կյանքի հետքեր՝ խաչ, կարաս, կալատեղեր ու

գերեզմանոց:

Մարցեցի Մուխտիլ պապը պատմում է, որ ժողովրդին ջարդել ու տեղահան է արել լազգու Հասա՛նխանը: Զրույցն է ասում: Ձորերում ճրագը մի անգամ էլ էր հանգչելու: Թուրքերն էին հանգցնելու: Հովհաննես Թումանյանը չթողեց:

Հա՛, ինքը չթողեց, Ուհաննես Թումանյանը: Տեսավ, որ ուզում են էս Ժողովրդի գլուխն ուտեն պրծնեն, նավ նստեց, Բաթումա ծովովը գնաց թուրքի թագավորի մոտ: Ասաց. բա անհարմար չե՞ս ղզգում... Չէ, դու ինձ ասա, իսկի ամոթ չե՞ս անում: Էս խառնակ ժամանակներումը որ էս մի ամբողջ ազդի գլուխը կերար, բա, հետո որ խաղաղությունն ընկավ, ի՞նչ պատասխան պտիս տալ մենձ ազգերին: Թագավորը մտածեց ու փաշին ետ կանչեց:

... Վերջերս սարերում խամ հողեր վարեցին: Դեռ չէին գտել, թե ինչ են ցանելու, դեղին ծաղկով ծփաց կտավատը: Նորերն այդտեղ սերմ չեն գցել: Այդտեղ սերմ գցել են հազար տարի առաջ: Մահը տարել է շինականին, և բերքը չի հավաքվել: Եկող գարնանը հողը չի հերկվել, մոլախոտը սրբել է մարդու հետքը: Իսկ կտավատը թաք է կացել հողում, սպասել հերկվողին: Անցել է տասը տարի՝ սպասել է. անցել է հիսուն տարի՝ սպասել է, արտատեղը կորել,հավասարվել է արոտում՝ նա սպասել է, սպասել է հազա՛ր տարի: Եվ դեղին դաշտը ծփաց վերջերս:

Փա՛ռք, փա՛ռք, փա՛ռք, երի՛ցս չէ, հազա՛ր անգամ փառք:

Յոթ ընտանիք՝ հավասար ունեցվածքով, կյանքի համար պայքարում հավասար, մանր հաղթանակներում ու մանր պարտություններում հավասար: Ամենքը երկու ձեռքով՝ ափերի մեջ հավասար կոշտուկներ, որոնց վրա նորերն էին քարանալու, և կոշտուկով պետք է ստեղծվեին կով, ոչխար, ձի: Օհանես պապն ունեցավ յոթ տղա մի աղջիկ, այդքան էլ ունեցավ Քառանց Մելիք պապը, և այլն: Չկար տեր ու ծառա, պարտապան ու պարտատեր, և այլն: Մի տեսակ՝ օհանեսամելիքյան կամ մելիքաօհանիսյան սոցիալիզմ:

Հետո, թե ինչ է Մուկուչանց Արշակը պախրայի որս շատ է սիրել քան մաճ բռնելը, նրա տղերքը դարձել են Օհանես պապի տղերանց հոտաղը: Հետո, թե

ինչ է Քառանց տղերքը լավ անասնապահ են եղել, նրանց ոչխարն ու կովը շատացել է և ուրիշ ձեռքի կարիք են զգացել, բերել են Ղազախի թուրերից: Հետո, թե ինչ է Օհանես պապի Ավետիք որդին բուխարու մոտ նստելը ավելի է սիրել քան ծեգը-ծեգին լծկան հավաքել-լծելը, իսկ Աթո որդին աշխատանք սիրող է եղել և նախանձ, եղբայրներից բաժանվել է ու հարստացել: Ու ձեռ է առել Ավետիք եղբորը, թե՝ «թաղիր, թաղիր, ոտներդ թաղիր բուխարու միջին, տաքությունը լավ բան է... Այ քու տունը քանդվի ոչ, քու տո՛ւնը...»:

Նոր օրերում Ահնիձորը նոր սոցիալիզմի համար կռվող մարտիկներ տվեց, թեպետև կռվողներ չտվեց մյուս ծայրի համար: Պատմում են, որ Թոմայանց Սարգիս քեռին՝ Օհանես պապի թոռը, կոլեկտիվից գոմեշ է գողացել, խրտնեցրել, քարի գլխից գցել է, մորթել ու տարել: Ուզում ես նրան կռվող հաշվել մյուս ծայրից, բայց, շարունակում են պատմել, մեկ էլ տեսնում ես՝ մարդը հայտնվեց դաշնակցական բանտում: Ուղղակի՝ գող է եղել, թոցրել է՝ ումից կարողացել է: